Արձանագրություն N 2-1
ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով գրասենյակային գույքի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 04.04.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան
Գ. Խաչատրյան
Մ. Արշալույսյան
Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Մ. Աղայանց)

1.1 Գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ-ի կողմից ներկայացված 1-ին չափաբաժնի՝ գրասեղանների տեխնիկական բնութագիրը թերի է, գույները անհրաժեշտ է համապատասխանեցնել հրավերի պահանջին՝ «Գույները ըստ քանակի նախապես պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ», անհրաժեշտ է հստակեցնել գրասեղանի դարակի քաշովի լինելը, դարակի եզրերի պատված լինելը (ներկայացված տեխնակական բնութագրում նշված է« **պետք է**»):

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2-րդ չափաբաժնի գրապահարանների տեխնիկական բնութագիրը թերի է, անհրաժեշտ է հստակեցնել բարձրությունը, լայնությունը, (ներկայացված տեխնակական բնութագրում նշված է« **առնվազն**», « **պետք է**»):

ԲԵՍԹ ՖԻՐՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3-րդ չափաբաժնի՝ բազկաթոռների տեխնիկական բնութագիրը թերի է, ներկայացված չէ կողմնորոշիչ նկարը, անհրաժեշտ է հստակեցնել հաստությունը, լայնությունը, խորությունը (ներկայացված տեխնակական բնութագրում նշված է« **առնվազն**», « **պետք է**»):

«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չեն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, 6-րդ չափաբաժնի՝ փոքր բազմոցի տեխնիկական բնութագիրը, իսկ ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 07.04.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում ադրանք կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 10.04.2025թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Կ. Բարսեղյան

---------- Գ. Խաչատրյան

---------- Մ. Արշալույսյան

---------- Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ. Հակոբյան